ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 02/61-123387 «07» 03 2017 թ.

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի
ՊԵՏ ՊԱՐՈՆ Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 28.02.2017 թվականի թիվ 01/04.1/672-17 գրության՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացրած թիվ 14/17 որոշման վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի և «Նիկոլ Դուման» ԱԿ-ի միջև «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 28.12.2016 թվականին կնքել է պայմանագիր, իսկ սույն թվականի հունվարի 13-ին՝ պայմանագրով նախատեսված գնման առարկայի մատակարարման դիմաց վճարումներ իրականացնելու նպատակով, կողմերի միջև օրենքով սահմանված կարգով կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

Տեղեկացնում եմ նաև, որ նշված պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ու վճարման ժամանակացույցերով նախատեսված ժամկետներում կողմերը ստանձնել են պայմանագրային պարտավորությունները, որոնք գտնվում են կատարման փուլում:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բողոքարկման խորհուրդը մերժել է բողոքաբերի պահանջը՝ ապօրինի հայտարարել կնքված պայմանագրերը և լրացուցիչ համաձայնագրերը, ապա հաշվի առնելով այն փաստը, որ բողոքաբեր անձը չի հանդիսացել գնման ընթացակարգի մասնակից, ինչպես նաև բողոք ներկայացնելու պարագայում ցանկացել է լինել անհայտ՝ գտնում ենք, որ եթե սույն գնման ընթացակարգի շրջանակներում որևէ կերպ խախտվել են վերջինիս օրենսդրական իրավունքները և բաց թողնված շահերը, ապա վերջինս կարող է օգտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված իրավունքներից:

Վ. ՆԻԿՈՅԱՆ

Կատարող՝ Գ. Չթրյան
Հեռ. 011 514-129